

TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի
2025 թ.
եռամսյակային
հաշվետվություն

15.05.25

Բովանդակություն

■ <u>Կարևոր իրադարձությունների նկարագիր</u>	3
■ <u>Երկրորդ եռամսյակի ռազմավարություն</u>	9
■ <u>Ռիսկերի բացահայտում և մեղմացում</u>	11
■ <u>Ֆինանսական վերլուծություն</u>	12
■ <u>ՀՀՄՍ համախմբված հաշվետվություն</u>	16
■ <u>Պատասխանատու անձանց հայտարարություն</u>	22

Կարևոր իրադարձությունների Նկարագիր

1. Կառավարման և կազմակերպական փոփոխություններ

Ձեկուցվող ժամանակահատվածում Ընկերությունն իրականացրել է մի շարք կազմակերպական փոփոխություններ՝ ուղղված գործունեության արդյունավետության բարձրացմանը, գործընթացների օպտիմալացմանը և կարգավորող պահանջներին լիարժեք համապատասխանելուն:

Վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխություն

2025 թվականի առաջին եռամսյակում ուժի մեջ է մտել նոր վարչակազմակերպական կառուցվածքը, որի մշակումը սկսվել էր նախորդ տարվա վերջին և Խորհրդի հաստատմանն է ներկայացվել 19.02.2025 թվականի Խորհրդի նիստին: Վերակառուցման հիմնական ուղղությունը եղել է որոշ գործառույթների համախմբումը՝ կրկնվող կառույցները բացառելու և որոշումների կայացման գործընթացը պարզեցնելու նպատակով:

Կառուցվածքի փոփոխության նպատակն էր.

- օպտիմալացնել ծախսերը,
- բարձրացնել կառավարման արդյունավետությունը,
- ամրապնդել վերահսկողության և ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- հստակեցնել ստորաբաժանումների գործառույթները,
- բարձրացնել հաշվետվողականության մակարդակը,
- հստակեցնել ղեկավար անձնակազմի աստիճանակարգությունը:

1. Կառավարման և կազմակերպական փոփոխություններ

Հիմնական փոփոխություններ

- Ստեղծվել է Վարչական ղեկարտամենտ, որն իր մեջ միավորում է Գնումների և վարչական աջակցման բաժինը, Իրավաբանական բաժինը, Անձնակազմի կառավարման բաժինը և Որակի վերահսկման բաժինը: Նոր միավորը գործում է անմիջապես Գլխավոր տնօրենի ենթակայությամբ:
- Վերակազմակերպվել է Ռիսկերի կառավարման և ներքին հսկողության ղեկարտամենտը, որը նոր կառուցվածքով գործում է անմիջապես Գլխավոր տնօրենի ենթակայությամբ, իսկ հետ մեկտեղ իր կառուցվածքային կազմի մեջ գտնվող Համապատասխանության ապահովման, ռիսկերի և ներքին ղիտարկման բաժինը ուղիղ հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Կատարվել են նաև առանցքային այլ փոփոխություններ, որոնք ուղղված են վարչական ճկունության բարձրացմանը և գործընթացների արագացմանը:

Վերոնշյալ փոփոխություններն իրականացվել են փուլային ձևով՝ ներքին վերապատրաստումների և ղեկավար անձանց խորհրդատվական աջակցության ուղեկցմամբ:

Կառուցվածքային հիերարխիա և աստիճանակարգային համակարգի բարելավում

Նոր կառուցվածքը ձևավորվել է հստակ աստիճանակարգային մոդելով, որը նպատակ ունի ապահովել կառավարման համակարգվածություն և յուրաքանչյուր մակարդակի պատասխանատվության հստակ սահմանում:

1. Կառավարման և կազմակերպական փոփոխություններ

Ըստ նոր կառուցվածքի՝ տարբերակվում են հետևյալ մակարդակները.

1. Տնօրեններ

Գլխավոր տնօրեն

Գլխավոր տնօրենի տեղակալ և տնօրեններ ըստ ուղղությունների (Տեխնոլոգիաների գծով տնօրեն, Բիզնեսի զարգացման տնօրեն):

2. Դեպարտամենտներ

Առաջատար գործառույթներ համախմբող միավորներ, որոնք համակարգում են մի քանի բաժինների աշխատանքը: Օրինակ՝ Հաշվապահական հաշվառման դեպարտամենտ:

3. Վարչություններ

Կոնկրետ գործառույթով օժտված ուղղվածություն ունեցող կառույցներ, որոնք միավորում են մի քանի բաժինների աշխատանք և վերահսկվում են Տնօրենների կողմից: Օրինակ՝ Տեղմիսալային բիզնեսի վարչություն:

4. Բաժիններ

Վարչության կամ դեպարտամենտի ներքին կառուցվածքային միավորներ, որոնք իրականացնում են կոնկրետ գործառույթներ կամ ծառայություններ: Օրինակ՝ Իրավաբանական բաժին, Ռազմավարական մարքեթինգի բաժին:

Այս հիերարխիկ կառուցվածքը նախատեսված է ապահովելու որոշումների կայացման ավելի կարճ շղթա, պատասխանատվության և հաշվետվողականության հստակություն, ստորաբաժանումների միջև արդյունավետ համագործակցություն:

2. Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի (ESOP) շրջանակներում բաժնետոմսերի տեղաբաշխում

2025 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 26-ն ընկած ժամանակահատվածում ընկերությունն իրականացրել է աշխատակիցների բաժնեմասի սեփականության ծրագրի (ESOP) շրջանակում բաժնետոմսերի տեղաբաշխում՝ նպատակ ունենալով խթանել աշխատակիցների ներգրավվածությունը, ամրապնդել երկարաժամկետ համագործակցությունը և ստեղծել սեփականության զգացողություն Ընկերության արժեքի ձևավորման մեջ:

Տեղաբաշխման մոդելը մշակվել է այնպես, որ արտացոլի ինչպես աշխատակցի ներդրումը ընկերության զարգացման մեջ, այնպես էլ նրա երկարաժամկետ հանձնառությունը: Այս քայլով ընկերությունը նպատակ է դրել.

- աշխատակիցների շահերը համապատասխանեցնել Ընկերության բաժնետերերի շահերին,
- տրամադրել լրացուցիչ խթան՝ տաղանդավոր աշխատակիցներ ներգրավելու և պահպանելու համար,
- խրախուսել աշխատակիցներին՝ նպաստելու Ընկերության երկարաժամկետ հաջողությանը:

Ընկերության կողմից աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 10.09.2024 թվականին, որով սահմանվել են բաժնետիրացման չափանիշները:

Չափորոշիչներն են եղել.

- զբաղեցրած պաշտոնի մակարդակը (ծրագրով սահմանված է եղել 7 պայմանական խումբ),
- ընկերությունում աշխատած տարիների քանակը (ծրագրով սահմանված է եղել 7 պայմանական խումբ),
- 2024թ. սեպտեմբերի 18-ից մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը իրականացվելիք առաջնային հրապարակային տեղաբաշխման ժամանակ Աշխատակցի կողմից գնված բաժնետոմսերի քանակը:

Տեղաբաշխվել է ընդհանուր 220,000 բաժնետոմս: Ընկերությունը նախատեսում է հետևյալ բաժնետոմսերը ցուցակել նաև Կարգավորվող շուկայում:

Տեղաբաշխման արդյունքների հիմքով կանոնադրության փոփոխությունը և Ընկերության բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցումը կատարվելու է երկրորդ եռամսյակում:

3. Ծառայությունների արդիականացման և տեխնոլոգիական փոփոխությունների մասին

2025 թվականի առաջին եռամսյակում ընկերությունը շարունակել է ներդնել նորարարական լուծումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել օգտատերերի թիվը, ապահովել տեխնոլոգիական առաջընթաց և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը:

1. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգում թվային լուծումների ինտեգրում

Ներդրվել են մի շարք նոր հնարավորություններ, որոնք Էականորեն փոխել են տրանսպորտային վճարումների մատչելիությունն ու հարմարավետությունը:

Որպես միջնորդ՝ մենք տրամադրում ենք Telcell Terminal-ների և Telcell Wallet հավելվածի միջոցով տրանսպորտային ուղեւորներ և փաթեթներ ձեռք բերելու, ինչպես նաև տրանսպորտային քարտերը համալրելու հնարավորություն:

Telcell Wallet-ում ուղեւորները հասանելի են առավել մատչելի սակագներով, ինչը խթանել է հավելվածի օգտագործումը:

Տերմինալների միջոցով, ուղեւորներից բացի, այսուհետ հնարավոր է ձեռք բերել նաև տրանսպորտային քարտեր:

Ստատիկ կամ դինամիկ QR-ները հնարավորություն են տալիս անկանխիկ, արագ և խնայողաբար օգտվել տրանսպորտից՝ ժամանակակից և արդյունավետ եղանակով:

Telcell Wallet հավելվածում ներդրվել է արտոնության ստուգման և անհատական սակագների տրամադրման մեխանիզմ, որը թույլ է տալիս օգտատերերին ստանալ իրենց արտոնությանը համարժեք հատուկ սակագներով ուղեւորներ ավտոմատ կերպով:

2. Տրանսպորտային համակարգից օգտվելու համար արտոնյալ գեղջի հարցում և օգտագործում

Telcell Wallet-ի միջոցով օգտատերերը կարող են ստուգել հասարակական տրանսպորտից օգտվելու արտոնության իրենց հասանելիությունը և գնել համապատասխան փաթեթներ՝ իրենց արտոնությանը համապատասխանեցված սակագներով: Այս հնարավորությունը դարձնում է տրանսպորտից օգտվելը ավելի պարզ, արդիական և անհատականացված:

3. Ծառայությունների արդիականացման և տեխնոլոգիական փոփոխությունների մասին

3. Telcell Wallet հավելվածի շարունակական բարելավումներ

Նույնականացման գործընթացի բարելավում. նույնականացման ընթացակարգի մի շարք բարելավումներ, որոնք զգալիորեն հեշտացնում և արագացնում են օգտատերերի նույնականացման գործընթացը՝ դարձնելով այն ավելի հասկանալի և հարմարավետ:

Քարտային փոխանցումների բարելավում. Telcell Wallet հավելվածի օգտատերերը, կատարելով քարտային փոխանցումներ, այսուհետ կարող են տեսնել ստացողի անունն ու ազգանունը՝ մասամբ թաքցված ձևաչափով, ինչը հնարավորություն է տալիս նախապես համոզվել, որ մուտքագրված տվյալները ճիշտ են:

Գլխավոր էջի թարմացում. գարնան մեկնարկին վերաձևավորվել է Telcell Wallet-ի գլխավոր էջի ինտերֆեյսը: Այժմ օգտատերերը կարող են ավելի արագ հասանելիություն ստանալ տրանսպորտային ուղետոմսերին, ինչպես նաև վերահսկել PartPay (BNPL) գործառույթի ընթացիկ կարգավիճակը:

4. Ֆինանսական անվտանգություն և զեղծարարության դեմ պայքարի գործիքներ

Տերմինալներում ներդրվել է զեղծարարության և ֆիշինգի դեմ պայքարի նոր գործիքակազմ, որն առավել հուսալի է դարձնում գործարքների կատարումը:

5. Գործընկերային ցանցի ընդլայնում

Հաշվետու եռամսյակի ընթացքում գործընկերային ցանցին միացել է ավելի քան 30 նոր օպերատոր, ինչը զգալիորեն ընդլայնել է Telcell համակարգում հասանելի ծառայությունների շրջանակը:

6. Օգտատերերի աճ

2025 թ. առաջին եռամսյակում Telcell Wallet-ի օգտատերերի թիվն աճել է շուրջ 10%-ով, հատկապես՝ տրանսպորտային ծառայությունների թվայնացման և մատչելի սակագնային քաղաքականության շնորհիվ:

Ընկերության ռազմավարությունը երկրորդ եռամսյակի համար

Ընկերության հիմնական ռազմավարությունն է.

- Ընկերության շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- Telcell Էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և էֆեկտիվության բարձրացում
- Ծախսերի արդյունավետության բարձրացում

Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար 2025 թվականի 2-րդ եռամսյակում Ընկերությունը, հաշվի առնելով ակտուալ փոփոխությունները, ընդգծում է զարգացման հիմնական ուղղությունները.

1. Կազմակերպական գործողություններ

- Կազմակերպատիրական կառուցվածքի ներդրման գործընթացի ավարտում
- Նոր մոտիվացիոն համակարգի ներդրում կատարողականների հիման վրա
- Ծախսերի օպտիմալացում և ծախսերի գնահատման մեխանիզմի ներդրում
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում
- Տեղեկատվական անվտանգության գերժամանակակից համակարգերի ներդրում

2. Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

- Ընկերության ընկալման, իմիջի և դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական Էկոհամակարգի
- Էկոհամակարգի ծառայությունների և հնարավորությունների, աշխատանքային սկզբունքների տեղեկացվածության մակարդակի բարձրացում

3. Բիզնես ուղղվածության գործողություններ

- Նույնականացման նոր, գերժամանակակից համակարգի ներդրում և գործարկում
- Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորություն Telcell Wallet հավելվածի միջոցով
- Նոր CRM համակարգի ներդրում
- Visa թվային քարտից կանխիկացման հնարավորության գործարկում
- Cash Out` բիզնեսի նոր ուղղության գործարկում
- Դրամական փոխանցումների ոլորտի նոր գործընկերոջ հետ համագործակցության մեկնարկ
- Տերմինալային ցանցի ընդլայնում գործընկեր նոր սուպերմարկետների ներգրավմամբ
- Սուպերմարկետների խոշոր ցանցերում Telcell Wallet հավելվածով վճարման հնարավորության ներդրում և ընդլայնված համագործակցության մեկնարկ

Ռիսկերի բացահայտում

Կազմակերպական գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված կառուցվածքային փոփոխությունը արդյունավետության անկման հնարավոր ռիսկ է պարունակում, որի զսպման համար ընկերությունը հաջորդ եռամսյակում նախատեսում է խրախուսման նոր համակարգերի ներդրում:

Նոր կառուցվածքը նաև կարող է ռիսկ առաջացնել անհամապատասխանության՝ վերահսկող մարմինների պահանջներին: Այդ ռիսկը զսպելու համար հաշվի են առնվել բոլոր պահանջները և միջազգային լավագույն փորձը:

Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

Տրանսպորտային նախագծի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ տեղեկատվական, ուսուցողական և բացատրական բնույթի նյութերի հրապարակումներ, որոնք էականորեն զսպել են նոր համակարգից օգտվող օգտատերերի ռիսկերը: Կատարվել են նախագծում ընկերության դերի, գործառույթների, պատասխանատվության շրջանակների վերաբերյալ բացատրական հրապարակումներ, որոնք հասարակության մոտ հստակեցրել են պատկերացումը «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի մասին:

Բիզնես ուղղվածության գործողություններ

CRM համակարգի ներդրումը զգալի կբարելավի մեր հավատարիմ հաճախորդների կարիքներն ու ցանկությունները բավարարելու հնարավորությունները և կօգնի ավելի արագ ու ճշգրիտ լուծումներ առաջարկել՝ զսպելով PR ռիսկերը, և ավելի հարմար էկոհամակարգ ստեղծել նոր հաճախորդներ ներգրավելու համար:

Նոր պրոդուկտների զարգացման ընթացքում ակտիվ ներգրավվում է նաև Ռիսկերի կառավարման դեպարտամենտը՝ ժամանակին բացահայտելու պոտենցիալ իրավական և ֆինանսական թերությունները, ներդնելու դրանց կառավարմանը համապատասխան համակարգեր: Դիտարկումից հետո միայն նոր պրոդուկտն անցնում է իրագործման փուլ:

Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ֆինանսական կայունություն և օպտիմիզացիա

Ընկերությունը 2025 թվականի ռազմավարությանը համահունչ շարունակում է իրականացնել օպտիմիզացիոն գործընթացներ՝ ուղղված շահութաբերության բարձրացմանն ու ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը:

Հաշվետու եռամսյակում բարելավվել են գործառնական ցուցանիշները՝ մասնավորապես՝ կրճատվել են ինչպես դեբիտորական, այնպես էլ կրեդիտորական պարտավորությունները: Դեբիտորական պարտավորությունների ծավալը նվազել է 235 մլն դրամով, իսկ կրեդիտորական պարտավորությունները՝ 2.9 մլրդ դրամով: Այս արդյունքները արձանագրվել են այն դեպքում, երբ Ընկերության շրջանառությունը նույն ժամանակահատվածում աճել է շուրջ 5%-ով՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ:

Ներդրումներ և ակտիվների կառավարման արդյունավետություն

Եռամսյակի ընթացքում իրականացվել են ներդրումներ երկարաժամկետ նախագծերի ուղղությամբ, ինչի հետևանքով Ընկերության հիմնական միջոցների ծավալը աճել է 102 մլն դրամով՝ հասնելով 1.3 մլրդ դրամի:

Բացի դրանից, ինկասացիոն ծառայությունների արդյունավետության բարձրացումը, այդ թվում՝ գիշերային ինկասացիայի բարելավումը և բանկերի հետ համագործակցության սերտացումը, նպաստել են դրամական միջոցների արագ շրջանառությանը: Արդյունքում, ճանապարհին գտնվող դրամական միջոցների ծավալը նվազել է մոտ 40%-ով:

Դրամական միջոցների կայունություն

Ցպահանջ հաշիվների վրա առկա գումարը հաշվետու եռամսյակում աճել է 273 մլն դրամով՝ հասնելով 4.6 մլրդ դրամի՝ ըստ 2024թ. մարտի 31-ի դրությամբ: Սա կարևոր գործոն է կազմակերպության ֆինանսական կայունության և նորմատիվների պահման տեսանկյունից:

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը: Ավելի մանրամասն \$ՀՄՍ հաշվետվությունը՝ հաջորդ գլխում:

Հազար ՀՀ դրամ	31.03.25	31.12.24	Աճ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	1,323,140	1,221,001	102,139
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,417,106	2,347,001	70,105
Ընդամենը	3,740,246	3,568,002	172,244
Ընթացիկ ակտիվներ			-
Այլ ընթացիկ ակտիվներ	451,541	544,602	(93,061)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,210,600	1,446,408	(235,808)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,666,526	7,915,646	(3,249,120)
Օգտագործման սահմանափակումով հաշիվներ	4,610,569	4,337,560	273,009
Ընդամենը	10,939,237	14,244,216	(3,304,979)
Ընդամենն ակտիվներ	14,679,483	17,812,218	(3,132,735)

Ակտիվների և պասիվների վերլուծություն


Վերոնշյալ պարտավորությունների նվազումից բացի, պասիվներում էական փոփոխություններից են ոչ ընթացիկ պարտավորություններից վարկերը և փոխառությունները, որոնք նվազել են ավելի քան 456 մլն դրամով՝ հասնելով 834 մլն դրամի, ինչը երկարաժամկետ հեռանկարում զգալի նվազեցնում է ընկերության ֆինանսական բեռը:

Ստորև ներկայացված է պարտավորությունների աղյուսակը:

Հազար ՀՀ դրամ	31.03.25	31.12.24	Աճ
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	834,040	1,290,678	(456,638)
Վարձակալության գծով պարտավորություն	133,615	148,650	(15,035)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	162,550	-
Ընդամենը	1,130,205	1,601,878	(471,673)
Ընթացիկ պարտավորություններ			-
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	84,196	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,701,864	10,590,202	(2,888,338)
Ընթացիկ հարկային պարտավորություններ	273,342	245,954	27,388
Ընդամենը	8,059,401	10,920,352	(2,860,951)
Ընդամենը պարտավորություններ	9,189,606	12,522,230	(3,332,624)

Սեփական կապիտալում փոփոխություններ

Կապիտալում 1-ին եռամսյակի ընթացքում Էականորեն փոխվել է միայն չբաշխված շահույթը՝ աճելով ավելի քան 200 մլն դրամով և հասնելով գրեթե 2.7 մլրդ դրամի:



Եկամուտների և ծախսերի Էական փոփոխությունները 2024 թվականի 1-ին եռամսյակի համեմատ

Եկամուտ. 2025 թվականի առաջին եռամսյակում Ընկերության շրջանառությունը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը շուրջ 10 մլրդ դրամով, ինչի արդյունքում եկամուտը տերմինալային բիզնեսից աճել է համաչափ կերպով:

Բացի այդ, եկամուտը միջազգային փոխանցումներից աճել է 25%-ով և բանկերից ստացված միջնորդավճարներից՝ 6%-ով:

Ծախս. աշխատավարձի հետ կապված ծախսերը աճել են 240 մլն դրամով, ինչը պայմանավորված է հիմնականում անցած տարվա երկու խոշոր նախագծերի իրականացման համար հունվարին տրամադրված բոնուսներով և աշխատավարձերի տարեկան վերանայմամբ:

Բանկային միջնորդավճարների փոխանցումներով պայմանավորված ծախսն ավելացել է 70 մլն դրամով՝ եկամտի աճին համարժեք:

Միևնույն ժամանակ, որոշ ծախսային հոդվածներում արձանագրվել է խնայողություն, մասնավորապես՝ 21 մլն դրամի տնտեսում փոխառություններից առաջացող ծախսերի կրճատման հաշվին, ինչպես նաև 21 մլն դրամի տնտեսում մարքեթինգային ծախսերի վերանայումների արդյունքում:

ՖՀՄՍ համախմբված հաշվետվություն

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31/03/25	31/12/24
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,323,140	1,221,001
Ոչ նյութական ակտիվներ	592,659	578,911
Գույքի	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	180,945	201,408
Կանխավճարներ	158,701	81,881
Տրամադրված փոխառություններ	241,244	241,244
Հետաձգված հարկային ակտիվներ	85,857	85,857
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,740,246	3,568,002
Պաշարներ	246,614	343,947
Տրամադրված փոխառություններ	46,642	45,329
Ավանդներ բանկում	158,285	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,210,600	1,446,408
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,666,526	7,915,646
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	4,610,569	4,337,560
Ընթացիկ ակտիվներ	10,939,237	14,244,216
Ընդամենը ակտիվներ	14,679,483	17,812,218

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31/03/25	31/12/24
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	1,212,750	1,212,750
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	181,913	188,310
Զբաղիչված շահույթ	2,678,075	2,471,789
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ	5,477,988	5,278,099
Զվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ	5,489,877	5,289,988
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	834,040	1,290,678
Վարձակալության գծով պարտավորություն	133,615	148,650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	162,550
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,130,205	1,601,878
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	84,196
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,701,864	10,590,202
Ընթացիկ հարկային պարտավորություններ	273,342	245,954
Ընթացիկ պարտավորություններ	8,059,401	10,920,352
Ընդամենը պարտավորություններ	9,189,606	12,522,230
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	14,679,483	17,812,218

2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 1-ն եռ.	2024
Հասույթ	2,446,161	10,335,029
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(839,209)	(3,388,524)
Այլ եկամուտ	317,855	1,586,963
Անձնակազմի ծախսեր	(826,609)	(2,732,208)
Վարձակալության գծով ծախսեր	(170,715)	(569,317)
Մաշվածություն և ամորտիզացիա	(85,570)	(413,707)
Թույլտվության վճարներ	(125,236)	(313,536)
Ինկասացիոն ծառայություններ	(138,354)	(457,008)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(124,897)	(668,286)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(44,404)	(154,025)
Բանկային ծառայությունների վճարներ	(77,332)	(511,776)
Պարտքային կորուստների գծով ծախս/ծախսի հակադարձում	(9,097)	(64,421)
Այլ ծախսեր	(208,089)	(754,432)
Շահույթ գործառնական գործունեությունից	114,505	1,894,752
Ֆինանսական եկամուտ	183,127	444,860
Ֆինանսական ծախսեր	(44,072)	(289,648)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	139,054	155,212
Շահույթ մինչև հարկերը	253,559	2,049,964
Շահութահարկի գծով ծախս	(39,225)	(453,322)
Ժամանակահատվածի զուտ շահույթ	214,334	1,596,642

3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,078,000	-	161,700	2,416,860	3,656,560	11,889	3,668,449
Տարվա շահույթ				1,596,642	1,596,642		1,596,642
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				1,596,642	1,596,642		1,596,642
Սովորական բաժնետոմսերի թողարկում	134,750	1,405,250			1,540,000		1,540,000
Շահաբաժիններ*				(1,419,000)	(1,419,000)		(1,419,000)
Հատկացում պահուստին			20,213	(20,213)	-		-
Այլ օգտագործումներ				(96,103)	(96,103)		(96,103)
Գործարքներ սեփականատերերի հետ	134,750	1,405,250	20,213	(1,535,316)	24,897	-	24,897
2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	2,478,186	5,278,099	11,889	5,289,988
Տարվա շահույթ				214,334	214,334		214,334
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				214,334	214,334		214,334
Սովորական բաժնետոմսերի թողարկում							-
Շահաբաժիններ*							-
Հատկացում պահուստին							-
Այլ օգտագործումներ				(14,445)	(14,445)		(14,445)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(14,445)	(14,445)	-	(14,445)
2025 թ. մարտի 31-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	2,678,075	5,477,988	11,889	5,489,877

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 1-ին եռ.	2024
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված միջնորդավճարներ	2,531,970	10,112,095
Վճարված միջնորդավճարներ	(811,179)	(3,348,597)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	289,301	1,495,447
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	121,871	460,269
Ստացված այլ եկամուտ	17,190	50,497
Վճարումներ աշխատակիցներին	(726,209)	(2,718,767)
Այլ ծախսեր	(983,380)	(3,401,121)
Ստացված տոկոսներ	183,127	444,860
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	622,691	3,094,683
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում	-	
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	(273,009)	1,621,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	103,214	(516,609)
Պաշարների փոփոխություն	97,333	(70,977)
Կանխավճարների փոփոխություն	(78,655)	58,082
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում	-	-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	(2,916,890)	(1,828,394)
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	(1,845)	(99,575)
Այլ պարտավորություններ	(118,632)	80,629
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	(2,565,794)	2,339,530
Շահութահարկի վճարում	-	(517,443)
Վճարված տոկոսներ	26,403	(129,513)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(2,539,391)	1,692,574

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 1-ին եռ.	2024
Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	18,526
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(187,447)	(655,881)
Ավանդի տեղաբաշխում	-	(162,000)
Ավանդի ելքագրում	-	162,033
Տրամադրված փոխառություններ	(36,064)	(45,288)
Տրամադրված փոխառությունների մարում	-	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(223,511)	(682,610)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(483,037)	(2,197,024)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(26,074)	(104,295)
Վճարված շահաբաժիններ	-	(31,019)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	1,540,000
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(509,111)	(792,338)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(3,272,013)	217,626
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,915,646	7,902,100
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(2,302)	(83,399)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	25,195	(120,681)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	4,666,526	7,915,646

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2025 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան



Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան



Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով



15.05.2025թ.



TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գործունեությունը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: